ՀՐԱՎԵՐ
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
Նախագծում և հեղինակային հսկողություն. /ՀՀ Տավուշի մարզ, 2015թ. գազամատակարարում և ջրամատակարարում/ RACP/TA/CQ-2014/064
Նախագծում և հեղինակային հսկողություն /ՀՀ Լոռու, Վայոց Ձորի, Շիրակի, Արագածոտնի մարզեր, 2015թ. գազամատակարարում և ջրամատակարարում/ RACP/TA/CQ-2014/065

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ" ԾՐԱԳԻՐ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ***ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ***
ՄԶՕՀ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ No -1390P

Սույն "Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր"-ը հետևում է սույն ծրագրի համար Ընդհանուր գնումների ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business **UN331** թիվ **802**, 24 Հունիսի, 2011թ-ին:

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամից /այսուհետ՝ ՄԶՕՀ/ "Գյուղական Կարողությունների ստեղծում" ծրագիրը /այսուհետ՝ ԳԿՍԾ/ իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

ՀՀ ԿԱ "Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ" ՊՀ-ն /այսուհետ՝ ԾԻԳ/ Տավուշի, Լոռու, Արագածոտնի, Վայոց Ձորի և Շիրակի մարզերի համայնքային գազամատակարարաման և ջրամատակարարաման նախագծային աշխատանքների իրականացման համար Խորհրդատուների ընտրության առաջիկա մրցույթին մասնակցելու նպատակով բոլոր շահագրգիռ կազմակերպություններին հրավիրում է ներկայացնել Հետաքրքրության հայտեր ներքոհիշյալ բոլոր ծրագրերի համար՝

"ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքի խմելու ջրագծի կառուցում", "ՀՀ Տավուշի մարզի Սևքար համայնքի խմելու ջրագծի կառուցում", "ՀՀ Տավուշի մարզի Վազաշեն համայնքի խմելու ջրագծի կառուցում" "ՀՀ Տավուշի մարզի Նավուր համայնքի գազատարի կառուցում", "ՀՀ Տավուշի մարզի Իծաքար համայնքի գազատարի կառուցում", "ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում", "ՀՀ Վայոց Ձորի մարզի Գոմք համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում", "ՀՀ Վայոց Ձորի մարզի Գլաձոր ջրամատակարարման համակարգի վերակառուցում", "ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի գազաբաշխիչ ցանցի ընդլայնում", " ՀՀ Արագածոտն մարզի Թալին համայնքի գազաբաշխիչ ցանցի ընդլայնում":

***Աշխատանքների նպատակը՝***

Խորհրդատուն պետք է իրականացնի բոլոր վերոհիշյալ ծրագրերի համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և շինարարության ընթացքում հեղինակային հսկողության մասնագիտական խորհրդատվական ծառայություններ :

Հայտում պետք է ներառվեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Պետական գրանցման վկայականի պատճենը;
- Հետաքրքրության հայտը ստորագրողի լիազորագիրը;
- Խորհրդատուի ընդհանուր փորձը նախագծային աշխատանքների իրականացման ոլորտում;
- Վերջին 5 տարիների ընթացքում գազամատակարարման, ոռոգման և ջրամատակարարման ոլորտներում իրականացված նախագծային աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ կառույցների և պատվիրատուների անվանումները, պայմանագրային արժեքները, իրականացման տարեթիվը և այլն ;
- Նախագծային աշխատանքների կատարման համար գործիքների, սարքերի, տրանսպորտային միջոցների, համակարգչային ու գրասենյակային տեխնիկաների ցանկը;
- Հետաքրքրության հայտը համատեղ ձեռնարկատիրական գործունեության սկզբունքով ներկայացնելու դեպքում պայմանագրի պատճենը;
- Աշխատակազմի ցանկը և աշխատանքային փորձառության վերաբերյալ տեղեկատվությունը (CV),
- Նախագծային աշխատանքների իրականացման համապատասխան արտոնագրի /լիցենզիայի/ պատճենը;
- այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ կհամարի հայտատուն:

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ 3-4 ամիս՝ փուլային տարբերակով:

Խորհրդատուն ընտրվելու է ՄԶՕՀ-ի կողմից 1982թ. նոյեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2014թ. դեկտեմբերի 24-ը, ժ. 18.00:

*ՀՀ ԿԱ “Գյուղական  տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ*
*Տնօրեն` Աշոտ Վարդանյան*
*Հասցե` ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ;*
*Հեռախոս` 374 10 – 54 – 65 -10; Ֆաքս` 374 10 – 58 – 80 -58; e-mail: procurement@rado.am*